Դատաւորն պաշարեալ սկսաւ շփոթիլ. որպէս կամիք այնպէս արասցուք. ընդէ՞ր վշտացուցանեմք զիրեարս վասն գործոց կեաւուրայց։ Նուրի ասէ՝ գործս չէ կեաւուրի, այլ Թաղաւորի, և չէ արժան նուաստացուցանել զհրաման Արքայի. զի տեսայք զօրինակն, և եթէ են տակաւին ցանկացողք, իջցեն յասպարէզ. և եթէ կամիս գիտել զճշմարիտն, չէ հարկ երթալ 'ի Բեթղեհէմ, եւ կամ հաւանութեամբ նոցին գործ կատարել, այլ իբրեւ Դատաւոր նստեալ ասա՝ Ժողովով վճռեսցուք զհրաման Արքային և ուարտեսցուք զգործն. եւ եթէ 'ի հաճութիւնս Ցունաց ակնարկես, զայն դու գիտես, և եթէ կրօնաւորք նոցին բռնաւորք իցեն, պարտ է ծանուցանել Արքայի։

Դատաւորն ասէ՝ քաւ լիցի, Ցոյնք ոչինչ ունին ասել, այլ կամիմ զի հաշտեսցին ընդ միմեանս, զի վէճք սոցա ոչ վերջանան. ուրեմն 'ի վաղիւ խնդրեսցուք 'ի Ժողովի զրանալի հիւսիսային դրան եւ յանձն արասցուք Հայոց, եւ տացուք հրաման վասն ուխտի Այրին ըստ հրովարտակին։ Հայք ասեն, յառաջագոյն պաշտօնեայք Տէրութեան կամէին գնալ յուխտ 'ի Բերրոն, եւ 'ի վերադարձի իւրեանց հանդիպիլ 'ի Բեթղեհէմ, այլ իբրեւ լուան թէ խըռովայոյզ Բեահեայ Փոխարքային Եգիպտոսի Մէհէմմէտ Ալեայ, 'ի դրդմանէ Ցունաց Ժողովեալ զբնակիչս գիւղին պատուիրեալ է նոցա 'ի սկսանիլ գործակալաց 'ի գործ, աղաղակ բառնալ, թէ Հայք ոչ ունին իրաւունս ոչ եկեղեցւոյն և ոչ Այրին, եւ եթէ բռնասցին նոքա, ընդդէմ կալ զինու եւ աներկիւղ պատերազմիլ։ Եւ ապա յասել Դատաւորին, թէ Նուրի էֆէնտի եթող զգնալն, զի մի 'ի պատճառս իւր լիցի խռովութիւն ինչ։ Նուրի էֆէնտի՝ ես ոչ երկնչիմ յերթալոյ, սակայն կարելի է Ցունաց պատրաստել զգիւղական և յարուցանել վէճս և աւիթ լինիլ աղմկի մեծի և ճայթման զինուց. մեք թերեւս գանակոծեալ փախուցեալ ապրեսցուք, և քանիք ոմանք անկցին 'ի Հայոց, և այս ամենայն հասանիցի յականջս Տէրութեան, և 'ի գնալն մեր անդ չգիտեմ թէ զինչ պատասխանի տացուք. զի առ Ցոյնս մարդասպանութիւնն ոչինչ է, որպէս 'ի չինութեան տաճարին Ս. Ցարութեան այնքան Իսլամաց մահուան առիթ եղեն։ Ցրուեցաւ Ժողովն։